

ներուն, կ'որոշէ Փորթուկայի հետ դաշինք կնքել և դեսպանութիւն մը ղրկել Լիզպոն, օգնութիւն խնդրելու համար(1)։

Դիւանագիտական այս կարեւոր ձեռնարկը իրականացնելու համար՝ յարմար մարդ մը պէտք էր։ Եւ այդ մարդը նկատուեցաւ Մատթէոս հայ եպիսկոպոսը(2), որ Եթովպիոյ արքունիքը կ'ապրէր և կ'երեւէ՝ այս տեսակ փափուկ պաշտօններ արդէն վարած էր այդ թուականէն առաջ։

Մատթէոս եպիսկոպոսի կ'ընկերանար հապէշ ազնուական երիտասարդ մը, որ շտակալով ճամբորդական դժուարութիւններուն՝ մեռաւ ճամբան։

Հեղինկ կայսրուհին իր դեսպանը ղրկած ժամանակ այն աստիճան յուսահատ վիճակի մէջ էր, որ

(1) Ազոնց (էջ 512) ուրիշ կերպով կը պատմէ։ Ոն Դաւիթ կայսեր կը վերագրէ այս ձեռնարկը, իսկ Յ. Նալբանդեան (Արեւ, 16 Փետր. 1935), ինչպէս Մ. Այվասեան (Յուսաբեր, 27 Նոյեմ. 1934) համաձայնաբար Հեղինէ խնամակալ կայսրուհին ցոյց կու տան Փարսիայի հետ յարաբերութեան մէջ մտնող վեհապետը։ Հ. Եփրեմ վրդ. Չափրնեան իր Պատմութիւն Հայոց գործին մէջ (էջ 451) այս ձեռնարկը կը վերագրէ Լիբնա Դենկալ կայսեր։

(2) Յ. Նալբանդեան իր «Հայերը և Եթովպիա» յոգուածաւորին մէջ չի յիշեր Մասթէոսի եպիսկոպոսական մասինները, զոր Հ. Եփրեմ վրդ. Չափրնեանէն զատ կը հաստատեն Վանատուր (Հ. Վանատուր վրդ. Յովհաննէսեան) (սեւ Յուսաբեր, 19 Հոկտ. 1938. ԺԴ. տարի, ք. 169) եւ մասնաւորապէս դեռ վերջին տարիներս Բրիտանական Թանգարանին սեփականութիւնը պարձած եւ 1521ին Լիզպոնի սպուած խիստ հագուազիւտ գիրք մը, որուն տիտղոսն է «Տեղեկարբեր նամակ մը որ մեր տիրոջ Թագաւորին եկաւ Յովհաննէս Բէցը գտնուելուն վրայ»։ Այս գիրքին մէջ Մասթէոս կը յիշուի «ապուհա» կոչումով, ինչ որ կը հաստատէ անոր եկեղեցականի հանգումները։ Յ. Նալբանդեան զայն կը ներկայացնէ իւր վաճառական։ Յայտնի չէ ի՞նչ Մասթէոս ուրկէ՞ գացած և Հապէթիսեան, բայց յայտնի է, որ բարձր գիրքի հասած էր եւ մեծ վասնիւթիւն գրաւած։